



Կերպին պատճառով թրքական իշխանությունները զինք Երուսաղեմ կ'աքսորեն:

1878-ին, Պոլսոյ պատրիարք Ներսէս Վարժապետեանի կարգադրութեամբ Խրիմեան Յայրիկ, Մինաս Չերազի եւ Նարայեի ընկերակցութեամբ կը մեկնի Պերլին, իբրեւ հայկական պատուիրակութեան նախագահ:

Այդ պատուիրակութեան նպատակն էր Պերլին երթալ հոն տեղի ունեցած մեծ տերութեանց ժողովին ներկայանալ եւ անոնցմէ խնդրել, որ իրականացնեն հայկական նահանգներու բարեկարգութիւնները, Սան Սթեֆանոյի մէջ մեծ տերութեանց ժողովի 16-րդ յօդուածով առնուած որոշումին գործադրութիւնը: Յայտնի է համայն հայութեան, թէ մեծ պետութիւններու, քաղաքական մութ հաշիւներով եւ Ռուսիոյ դէմ քայլ մը առնելով, Պերլինի մէջ 16-րդ յօդուածը փոխարինեցին 61-րդ յօդուածով, որուն հիման վրայ եւրոպական վեց պետութիւններ պիտի հսկէին հայկական գաւառներու բարենորոգման աշխատանքներուն, փոխանակ միայն Ռուսիան ընէր այդ գործը:

Պոլիս վերադարձին Խրիմեան Յայրիկ ժողովուրդին կը պատմէ ժողովին մանրամասնութիւնները եւ «Երկաթեայ շերտի» հանրածանօթ առակը:

Մէկ կողմէն Խրիմեան Յայրիկ կը յայտնէ այդ ժողովին իր յուսախաբութիւնը, միւս կողմէն՝ հայ ժողովուրդը կը յորդորէ, որ գիտնայ արժեքը զէնքի ուժին եւ ինքնապաշտպանութեան:

26 Սեպտեմբեր 1893-ին, Էջմիածնի մէջ ձայներու մեծամասնութեամբ զինք Ամենայն Յայոց Կաթողիկոս կ'ընտրեն:

Իսկ հայ ազատագրական շարժման ձեւաւորման եւ գաւառի հայութեան զարթօնքի գործին մէջ իր անփոխարինելի դերը կատարած է Խրիմեան Յայրիկ, որուն որպէս հետեւանք Վանի մէջ ծնունդ առին «Սեւ Խաչ», «Պաշտպան Յայրենեաց» եւ Արմենական կուսակցութեան ի ն ք ն ա պ ա շ տ պ ա ն ա կ ա ն ջ յ կ ա տ ն եր ղ:

Խրիմեան Յայրիկ ունի բազմաթիւ գրութիւններ եւ հատորներ ինչպէս «Յայ թրքահայութեան եւ Վանի հայութեան աղետները»: Իր գլուխ գործոցը կը նկատուի «Պապիկ եւ Թռռնիկ» գործը, ուր պապիկը իր թռռնիկին կը փոխանցէ հայկական հողին սերը, ընտանեկան սրբութիւններուն եւ աւանդութիւններուն պաշտամունքը:

Ամենայն Յայոց «Յայրիկ»ի կեանքը վերջ գտաւ 20 Յոկտեմբեր 1907-ին: Ծովածաւալ բազմութիւն մը ներկայ եղաւ անոր թաղման արարողութեանը եւ թաղուեցաւ Ս. Էջմիածնի մէջ:

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Յայ ժողովուրդը ունեցած է սքանչելի հոգեւոր եւ ազգային գործիչներ, որոնցմէ մեկն է Ամենայն Յայոց Կաթողիկոս՝ Մկրտիչ Խրիմեան Յայրիկը:

Խրիմեան Յայրիկ ծնած է Վանի Այգեստան քաղաքը, 4 Ապրիլ 1820-ին: Փոքր տարիքէն կը կորսնցնէ իր հայրը, կը մեծնայ հօրեղբօրը խնամքին տակ: 27 տարեկանին կ'ամուսնանայ եւ մէկ զաւակ կ'ունենայ: Բարձրագոյն ուսում ստանալու համար Վանէն Պոլիս կ'անցնի, հոնկէ Եւրոպա մեկնելու համար, սակայն նիւթական պատճառներով չի կրնար այս երազը իրականացնել եւ Պոլսոյ մէջ կը գործէ որպէս ուսուցիչ:

Պոլսոյ մէջ կը կորսնցնէ իր մայրը, կինը եւ մէկ հասակ դուստրը: Այս կորուստները շատ ծանր կը ճնշեն Խրիմեան Յայրիկին վրայ:

1853-ին ծննդավայր՝ Վան, կը վերադառնայ եւ կ'որոշէ վանական ըլլալ: Աղթամարի վանքին մէջ կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի: Մէկ տարի վերջ իր հոգեւորական աշխատանքին կողքին կը սկսի գրական եւ հասարակական գործունեութեան:

1855-ին, Վանի մէջ կը ձեռնարկէ «Արծուի Վասպուրական» ամսաթերթի հրատարակութեան: 1862 ին, կ'ընտրուի վանահայր Տարօնի Ս. Կարապետ վանքի: Այդ տարիներուն թերթին անունը կը փոխէ եւ կ'ըլլայ «Արծուիկ Տարօնոյ»: Թէ՛ Վարազայ, եւ թէ՛ Ս. Կարապետ վանքերու վանահայրութեան շրջանին, բազմաթիւ դպրոցներ կը բանայ, եկեղեցիներ կը կառուցէ եւ գիրքեր կը հրատարակէ:

1869-ին, կ'ընտրուի Պոլսոյ պատրիարք: Յոն եղած շրջանին, իր յաճախակի քննադատութիւններուն, յանդուգն եւ կորովի գործելա-




ԹԻՒԷ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՌԻՅԱ ԿՈՒՏԱՆ-ՏԻՊՈՒԹԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՌԱՅՅԻ ԲԵՇՈՒՇԵԱՆ



ԾԱՆՕԹԱՆԱԲ ԵՂԻՉԷ ԶԱՐԵՆՑԻՆ

Եղիշէ Զարենց բուն անունով Եղիշէ Սողոմոնեան: Ծնած է Կարս քաղաքը 13 Մարտ 1897-ին: Շատ կանուխէն ծնողները կը փոխադրուին Կարս, ուր կը ստանայ իր նախնական եւ միջնակարգ ուսումը: Դեռ պատանի, հազիւ 18 տարեկան, կամաւոր կ'արձանագրուի, նախորդ մեծ պատերազմին եւ կամաւորական գունդերուն հետ կ'երթայ մինչեւ Վան: 1915-ին Մոսկուա կը մեկնի ուսանելու: 1917-ին, իբրեւ զինուոր կը մտնէ կարմիր բանակ եւ 1919-ին վերջերը կը վերադառնայ Երեւան, ուր շրջան մը կը զբաղի ուսուցչութեամբ: Գրել սկսած է կանուխ 1912-ին, երբ դեռ հազիւ տասնհինգ տարեկան էր: Իր առաջին քերթուածները, մինչեւ 1917-ի ռուսական յեղափոխութիւնը, կը կրեն զուտ անհատական եւ հայրենասիրական դրոշմ: Իր վերջին գործին՝ «Գիրք ճանապարհի»ի հրատարակութենէն ետք ամբաստանուեցաւ իբրեւ ազգայնական ձգտումներ ունեցող եւ բանտարկուեցաւ: Եղիշէ Զարենց մահացաւ բանտին մէջ:

Զարենցի գլխաւոր երկերն են՝ «Տանթեական Առասպել», «Երկիր Նա- յիրի», «Գիրք ճանապարհի», «Էպիքական Լուսաբաց», «Պոեմներ»:



ԺՊԻՏ

* Բժշկական քննութեան.
Ուսուցիչը.- Ի՞նչ դեղ կը տրուի թու-
նաւորուած անձին:
Աշակերտը.- Յաղորդութիւն:

* Յայրը կը հարցնէ մանչուկին.
-Ուսուցիչդ կ'անդրադառնա՞յ որ ես
քու դասերուդ կը նայիմ:
-Կարծես հայրի՛կ, որովհետեւ երբ
այս առտու տետրակիս էջերը կը թեր-
թատեր, ըսաւ. «Օրէ օր աւելի ապուշ
կը դառնաս»:

* Ուսուցիչը.- Ինչո՞ւ կը վախնաս
հարցումներէս:
Աշակերտը.- Ես ձեր հարցումներէն
չեմ վախնար, այլ իմ պատասխաննե-
րէս:

ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐ

- 1- Ոսկոր չունիմ եւ ճկուն եմ.
ունիմ երկու յատկութիւն՝ երբեմն
քաղցր եմ մեղրի պէս, իսկ երբեմն
ալ կը խայթեմ օձի պէս: Ի՞նչ եմ:
- 2- Ես փետուր ունիմ, բայց թել
չունիմ, գիշերները քուն կը բերեմ,
բայց չեմ քնանար: Ի՞նչ եմ:
- 3- Ի՞նչ է այն, որ կը քալէ
առանց ոտքեր ունենալու:

Կողմորոտ-Գ
ՎՄՄԺ-Շ
ԴԵԳՂ-Լ
ՅԳՂՂՊՊՈՏՈՆ

3 pairs of shoes + 3 pairs of shoes = 30
1 pair of shoes + 2 cats = 20
2 cats + 2 pairs of shoes = 13
1 pair of shoes + 1 cat + 1 pair of shoes = ?

Թ ու ա բ ա ն կ ա ն
խնդիրը լուծէ՛:

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ ԵՐԿԱԹԷ ՇԵՐԵՓԻ ՊԱՏԳԱՄԸ

Հայկական հարցին լուծում մը գտնելու առաջադրանքով 1878 Յունիսի սկիզբը Պերլին մեկնած հայկական պատուիրակութիւնը, Խրիմեան Հայրիկի գլխաւորութեամբ, դժգոհ մնացած էր 8 Յունիսի նիստին վեհաժողովին որդեգրած եւ հայոց առնչուող 61-րդ յօդուածէն:

Խրիմեան Հայրիկ Պոլիս հասաւ հոգեպէս ջախջախուած: Յընդած էին այն երազները, որ Պերլին տարած էր հետը: Ան հիասթափուած էր:

Քանի մը օր ետք Խրիմեան Հայրիկ Գումգաբուի աթոռանիստ Սուրբ Աստուածածին մայր եկեղեցւոյ մէջ քարոզ մը խօսեցաւ:

«Օրհնեալ եւ սիրելի ժողովուրդ, ի՛նչ որ կ'ըսեմ՝ լա՛ւ մտիկ ըրէք, ըսածներուս իմաստը խորապէս ըմբռնեցէ՛ք:

«Գիտէք, որ մենք Ներսէս պատրիարքի եւ Ազգային ժողովի որոշումով իբրեւ պատգամաւոր գացինք Պերլին՝ հայկական դատը մեծ պետութիւններուն վեհաժողովին ներկայացնելու համար: Շատ մեծ յոյս ունէինք, որ վեհաժողովը աշխարհին խաղաղութիւն՝ իսկ փոքր եւ ճնշեալ ազգերու, եւ մեր ազգին՝ ազատութիւն պիտի շնորհէր: Վեհաժողովը բացուեցաւ աշխարհի մեծ պետութիւններուն քաղաքագետ պատգամաւորները շարուեցան կանաչ սփռոցով սեղաններուն շուրջ, իսկ փոքր եւ ճնշեալ ազգերու պատգամաւորներս վեհաժողովէն դուրս կը սպասէինք:

«Վեհաժողովին մէջտեղը, կանաչ սփռոցով ծածկուած սեղանի մը վրայ, դրուած էր մեծ կաթսայ մը հարիսայ, ուրկից բաժին պիտի ստանային աշխարհի մեծ ու փոքր ազգերն ու տերութիւնները: Ժողովականներէն ոմանք կը քաշէին արեւելք, ոմանք կը քաշէին՝ արեւմուտք, եւ այսպէս երկար վիճաբանելէ յետոյ, սկսաւ կարդալ, մէկ առ մէկ, ներս կանչել փոքր ազգերու պատգամաւորները: Նախ պուլկարը ներս մտաւ, ապա սերպիացին, որոնց կողերէն կախուած սուրբերուն չաքուրչուքոցը գրաւեց ժողովականներու ուշադրութիւնը: Բաւական խօսելէ յետոյ, այս երեք պատգամաւորները քաշեցին իրենց սուրբը եւ իբրեւ երկաթեայ շերտի խոթելով հարիսայի կաթսային մէջ, իրենց բաժին հարիսան առին եւ հպարտ ու համարձակ հեռացան:

«Կարգն եկաւ հայոց պատգամաւորին եւ մօտեցայ, Ազգային ժողովին կողմէ ձեռքս տրուած աղերսաթուղթը ներկայացուցի եւ աղաչեցի, որ իմ ամանս ալ լեցնեն հարիսայ: Յայնժամ կաթսային գլուխը սպասող մեծաւորները ինձ հարցուցին, ո՞ւր է քու երկաթեայ շերտիդ: Յիրաւի հոս հարիսայ կը բաժնուի, բայց երկաթեայ շերտի չունեցողն չի կրնար անոր մօտենալ, զայս իմացի՛ր, որ եթէ մօտ ատենէն այս հարիսան կրկին բաժնուի, յայնժամ առանց շերտի չի գալ, պարապ յետ կը դառնայ: Է՛հ, սիրելի ժողովուրդ հայոց ես կրնայի՞ հարիսայի կաթսային մէջ խոթել իմ թուղթ շերտիդ, որ պիտի թրջուէր եւ հոն մնար: Հոն, ուր զէնքն է խօսողը, ուր սուրբը կը շողշողան, հոն ի՛նչ գործ ունին խնդիրք եւ աղերսաթուղթերը:

«Ժողովուրդ հայոց, անշուշտ լաւ հասկցաք, թէ զէնքը ի՛նչ կրնար գործել եւ կը գործէ: Ուրեմն, սիրելի եւ օրհնեալ հայաստանցիներ, զաւառացիներ, երբ հայրենիք վերադառնալու ըլլաք, ձեր բարեկամներուն եւ ազգականներուն իբրեւ պարգեւ՝ մէկ-մէկ զէնք տարէք, զէ՛նք առէք եւ դարձեա՛լ զէնք: Ժողովուրդ, ամենէն առաջ քու ազատութեան յոյսը քու վրադ դիր, քու խելքին եւ բազուկին ուժ տուր: Մարդ ինքն ինքնիրմէն պետք է աշխատի որ փրկուի»:

Հայրիկի քարոզը շատ խոր եւ անջնջելի տպաւորութիւն ձգեց ժողովուրդին վրայ եւ ցնցեց հոգիները:



ՄՕՐԱ ՀԱՄԱՐ ԳԱԶԵԼ Եղիշե Զարեկ

Յիշում եմ դեմքը քո ծեր, մայր իմ անուշ ու անգին, Լոյս խորշումներ ու գծեր, մայր իմ անուշ ու անգին: Ահա նստած ես տան դեմ, ու կանաչած թթենիի Դեմքիդ ստուեր է գցել, մայր իմ անուշ ու անգին: Նստեր ես լուռ ու տխուր, հին օրերն ես յիշում այն, Որ եկել ես ու անցել, մայր իմ անուշ ու անգին: Եւ յիշում ես քո որդուն, որ հեռացել է վաղուց, Ո՞ւր է արդեօք հեռացել, մայր իմ անուշ ու անգին: Ո՞ւր է արդեօք հիմա նա, ո՞ղջ է արդեօք, թե մեռած, Եւ ի՞նչ դռներ է ծեծել, մայր իմ անուշ ու անգին: Եւ երբ յոգնած է եղել, երբ խաբուել է սիրուց, Ո՞ւմ գրկում է հեծեծել, մայր իմ անուշ ու անգին: Մտորում ես դու տխուր, օրորում է թթենին Տխրութիւնը քո անծիր, մայր իմ անուշ ու անգին: Եւ արցունքներ դառնադի ահա ընկնում ես մէկ-մէկ Քո ձեռքերի վրայ ծեր, մայր իմ անուշ ու անգին...



Ի՞ՆՉ ԳԻՏԵՆՔ ՄՐՋԻՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Մրջիւնները երկրագունդին վրայ կ'ապրին անելի քան 140 միլիոն տարիներ է ի վեր:

Տերեւ կտրող մրջիւնները արեւադարձային միջատները են, որոնք կ'ապրին Ամերիկեան ցամաքամասին վրայ: Այս մանր էակները արեւադարձային անտառները կը կտրեն հարիւր հազարաւորներէ կազմուած խումբերով, որոնց երկարութիւնը կրնայ հասնիլ մինչեւ 30 մէթրի: Երբ այդ մրջիւնները կը գտնեն իրենց «որս» բոյսը, անոնք իրենց ակռաները կը գործածեն տերեւները կտոր-կտոր ընելու համար: Սակայն անոնք այս կտորները չեն ուտեր: Անոնք կը վերադառնան իրենց բոյնը եւ կը սպասեն, որ սունկեր բուսնին այդ տերեւներուն վրայ: Եւ ապա անոնք կ'ուտեն այդ սունկերը...

Գոյութիւն ունին տերեւ կտրող մրջիւններու 39 տարբեր տեսակներ: Անոնց մեծութիւնը կը հասնի 1,3 սմ. ի, բայց թագուհին կրնայ մինչեւ 2,8 սմ երկարութիւն ունենալ:

Անոնք կզակները մէկ երկվայրկեանուան մէջ կը թրթռան 1000 անգամ: Այս մրջիւնները կրնան իրենց ծանրութենէն 50 անգամ անելի ծանրութիւն շալկել:

Անոնք շատ նրբակեր են: Տերեւ կտրող մրջիւնի տեսակ մը, որ կ'ապրի Քոսթա Ռիքայի մէջ, իր տրամադրութեան տակ գտնուող 332 բոյսի տեսակներէն միայն 17 տեսակը կ'ուտէ:

